2019

Տարեկան հաշվետվություն

IDBank

Բովանդակություն

1. Ռազմավարական հաշվետվություն

Խորհրդի նախագահի ուղերձ 04

Վարչության նախագահի ուղերձ 05

ՀՀ տնտեսությունը 06

Մեր ռազմավարությունը և արդյունքները 07

Ֆինանսական արդյունքներ 14

Մեր անձնակազմը 17

2. Կորպորատիվ կառավարում

Մեր բաժնետերերը և խորհուրդը 21

Ռիսկերի կառավարում 22

3. Ֆինանսական հաշվետվություններ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 26

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 26

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությ 27

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 27

Պատասխանատու անձանց հայտարարությու 28

1

Ռազմավարական հաշվետվություն

Խորհրդի նախագահի ուղերձ 04

Գործադիր տնօրենի ուղերձ 05

ՀՀ տնտեսությունը 06

Մեր ռազմավարությունը և արդյունքները 07

Ֆինանսական արդյունքներ 14

Մեր անձնակազմը 17

Խորհրդի նախագահի ուղերձ

Վարդան Դիլանյան
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

Ծնվել է 1971թ. հուլիսի 24-ին:

1994թ. ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը, միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը:

2010թ. ավարտել է «Սկոլկովո» Մոսկվայի կառավարման դպրոցը, Executive MBA:

2008թ. նշանակվել է «ԲԻՆԲԱՆԿ» ԲԲԸ նախագահ:

2011թ.-ից աշխատում է «Ակսենչեր» ընկերությունում որպես կառավարիչ-տնօրեն «Ֆինանսական ծառայություններ» գործառնական խմբում:

Ներկայումս հանդիսանում է «Ակսենչեր» ընկերության գործադիր տնօրեն Ռուսաստանում և Ղազախստանում:

2016թ-ին նշանակվել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ:

Հարգելի ներդրողներ, հաճախորդներ և բաժնետերեր,

IDBank-ը 2019 թվականին գրանցել է աճի դրական դինամիկա գործունեության հիմնական ոլորտներում՝ միաժամանակ ապահովելով բարձր եկամտաբերություն և առաջանցիկ զարգացում:

Մեր ֆինանսական ցուցանիշները, ինչպես նաև մեր առջև դրված նպատակների իրականացումը վկայում են մեր գործունեության ինչպես քանակական, այնպես էլ որակական աճի մասին:

Անկասկած, 2019 թվականը նշանակալի էր Բանկի թվային տրանսֆորմացիայի շրջանակներում իրականացված նախագծերի առումով: Այլևս վստահորեն կարող ենք փաստել, որ մենք ամրապնդել ենք մեր դիրքը թվային աշխարհում: Ազգային առաջատար վճարահաշվարկային կազմակերպություն հանդիսացող Idram-ի հետ համատեղ ստեղված թվային հարթակը զգալիորեն պարզեցնում է մեր հաճախորդների կյանքը՝ տրամադրելով բազմաթիվ նոր ծառայություններ և, միևնույն ժամանակ, խնայելով ժամանակը:

Մյուս կողմից, թվային հարթակի գործարկումը մեկ քայլ առաջ է մեր ռազմավարության իրագործման ճանապարհին, որի նպատակը հաճախորդի անթերի փորձառության ապահովումն է մեր էկոհամակարգի միջոցով:

2019 թվականին մենք շարունակել ենք զարգացնել նաև մեր մասնաճյուղային ցանցը՝ հագեցնելով մասնաճյուղերը նորարարական և տեխնոլոգիական լուծումներով: Մենք կարևորում ենք անձնական շփումները հաճախորդների հետ:

Ուրախ եմ փաստել, որ վերոնշյալ ուղղություններով մեր հաջողված աշխատանքը հանգեցրել է հաճախորդների քանակի զգալի աճի: Վստահ եմ, որ մեր ջանքերի և հոգատարության շնորհիվ նրանք կդառնան մեր հավատարիմ հաճախորդները:

Հիմնվելով այս տարվա ընթացքում մեր գրանցած հաջողությունների վրա՝ 2020 թվականի ռազմավարությամբ Բանկի առջև խնդիր է դրված հասնել արդյունավետության նոր աստիճանի: Մենք համոզված ենք, որ տեխնոլոգիական զարգացման և նորարարությունների վրա կատարված ներդրումները մեր երկարաժամկետ աճի գրավականն են, այդ իսկ պատճառով այդ ուղղությունները կշարունակեն մնալ Բանկի ռազմավարության առանցքում:

Մեր ջանքերի շնորհիվ մենք կշարունակենք կայուն դիրք զբաղեցնել Հայաստանի թվային ուղղվածությամբ բանկերի շրջանակում, ինչպես նաև համագործակցել միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ՝ միաժամանակ չզիջելով նրանց ֆուկցիոնալ հնարավորություններով և տեխնիկական հագեցվածությամբ:

Խորհրդի անունից կցանկանայի շնորհակալություն հայտնել մեր թիմին՝ ևս մեկ անգամ ընդգծելով, որ Բանկի հիմնական ակտիվը մեր աշխատակիցներն են: Վստահ եմ որ մեզ միավորում է ոչ միայն ամենօրյա համատեղ աշխատանքը, այլև ընդհանուր արժեքները և Բանկի զարգացման տեսլականը: Շնորհակալություն եմ հայտնում նաև մեր հաճախորդներին, ներդրողներին և գործընկերներին նրանց վստահության և հավատարմության համար:

Խորհրդի նախագահ
Վարդան Դիլանյան

Վարչության նախագահի ուղերձը

Մհեր Աբրահամյան
Վարչության նախագահ

Ծնվել է 1975թ. հոկտեմբերի 16-ին:

1997թ ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի Կառավարման և տնտեսական կապերի ֆակուլտետը:

2004թ. ավարտել է ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլետչերի Իրավունքի և Դիվանագիտության դպրոցը: Ունի CFA I, II մակարդակների որակավորում:

1999թ.-ից աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում, 2007–2012թթ.՝ որպես ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կարգավորման վարչության Բանկային համակարգի կարգավորման բաժնի ղեկավար, 2012 – 2018 թթ.՝ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետ:

2019թ. նշանակվել է IDBank-ի Վարչության նախագահ:

Հարգելի գործընկերներ, հաճախորդներ և բաժնետերեր,

2019-ը IDBank-ի համար ռազմավարական նշանակության նպատակների իրագործման տարի էր:

Հաստատուն քայլերով կատարելագործելով թվային ուղիները՝ մենք այսօր առաջարկում ենք հեռավար սպասարկման ամբողջական գործիքակազմ:

Միաժամանակ մենք ստեղծեցինք սպասարկման նոր միջավայր, որտեղ հաճախորդն իրեն զգում է ոչ թե Բանկում, այլ բոլորովին այլ հարթությունում. այստեղ՝ մեկ վայրում բավարարվում են հաճախորդների հիմնական պահանջները՝ սպասարկման, աշխատանքի, հանգստի և այլն: Խոսքն IDBank-ի՝ Հյուսիսային պողոտայի վրա գտնվող ֆլագմանյան մասնաճյուղի մասին է, ուր ամեն ինչ կառուցված է հաճախորդի շուրջ և հաճախորդի համար:

2018 թվականի ռեբրենդինգից հետո IDBank-ի ընտրած ռազմավարական ուղին՝ հաճախորդների համար ստեղծել թե անմիջական շփման, թե հեռավար սպասարկման անթերի միջավայր՝ արդեն իրականություն է: Մենք շարունակում ենք անշեղորեն շարժվել ընտրած ռազմավարությունն իրագործելու, ձեռքբերումները բազմապատկելու և մեր հաճախորդների գործընկերը լինելու ուղղությամբ:

Այս ճանապարհին արդեն իսկ ապացուցել է իր արդյունավետությունը. Բանկը շարունակում է առաջատար դիրքեր զբաղեցնել կապիտալի և ֆինանսական արդյունավետության ցուցանիշներով: Ավելորդ չէ նշել, որ 2019 թվականի արդյունքներով բանկի զուտ շահույթի տարեկան աճը կազմել է 17.1%, 2019 թվականի ընթացքում արձանագրել ենք Բանկի վարկային պորտֆելի զգալի աճ՝ 26 %: Մենք մշտապես աշխատանքներ ենք իրականացնում հաճախորդներին նորարարական և հարմարավետ պրոդուկտներ առաջարկելու ուղղությամբ: 2019 թվականին շուկային առաջարկելով մեր նորարարական Ռոքեթ Վիզա քարտերը, տարվա ընթացքում թողարկել ենք շուրջ 100,000 քարտ: Վստահությամբ կարող եմ փաստել, որ մեր առաջարկած քարտային և վարկային պրոդուկտներն առանձնանում են շահավետ պայմաններով, ինչի շնորհիվ էլ 2019-ի ընթացքում մեզ են միացել մեծ թվով հաճախորդներ: IDBank-ը նրանց առաջարկում է քարտային, վարկային և ընդհանրապես բանկային նոր մշակույթ:

Այս առումով մեր տեսլականը կառուցվում է միայն և միայն հաճախորդի շուրջ. թե տեխնոլոգիական զարգացումը, թե մասնաճյուղային ցանցի էական բարելավումն ուղղված են հաճախորդների համար առանձնահատուկ միջավայրի ստեղծմանը: Դա այն ամուր հիմքն է, որի վրա կառուցվել և կառուցվելու են մեր գործընկերային հարաբերությունները:

Եվ սա միայն սկիզբն է մեր նորարարական ճանապարհի, որի շնորհիվ IDBank-ն էական ձեռքբերումներով, հաստատուն ցուցանիշներով մուտք է գործել 2020 թվական: Այս ամենն ապացուցում է, որ մենք ընտրել ենք զարգացման ճիշտ ռազմավարություն և շարժվում ենք հստակ ուրվագծված ճանապարհով:

Միանշանակ դա ոչ միայն տեխնոլոգիաների, այլ նաև մարդկային ռեսուրսների շնորհիվ է: Պրոֆեսիոնալ կադրերը գնալով ավելի ու ավելի են կարևորվում մեր ոլորտում, և ես հպարտությամբ կարող եմ ասել, որ IDBank-ն ունի իսկական պրոֆեսիոնալների և նվիրյալների թիմ, որը հավատում է մեր տեսլականին և առավելագույն ջանքեր գործադրում այն կյանքի կոչելու համար:

Ունենալով այսպիսի թիմ, գիտակցելով անընդհատ փոփոխությունների անհրաժեշտությունը, գործի դնելով դրանք իրականացնելու նորարար գործիքակազմը, վստահ եմ, որ այս տարի ևս կարողանալու ենք ճիշտ գնահատել մեր հնարավորությունները և համապատասխանել բոլոր նրանց սպասումներին, ում համար աշխատում ենք՝ բաժնետերերի, գործընկերների և յուրաքանչյուր հաճախորդի, որ գալիս է IDBank:

Վարչության նախագահ
Մհեր Աբրահամյան

ՀՀ տնտեսություն

ՀՆԱ ընթացիկ գներով, մլրդ ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գնաճ (տարեկան կտրվածքով, ժամանակահատվածի վերջ,%)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Միջին տարեկան փոխարժեքներ



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Բանկերի ակտիվների և վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Մեր ռազմավարությունը և արդյունքները

Ծնվել է 1976թ. մարտի 30-ին:

2001թ. ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան Պետական Համալսարանի Մեխանիկական-Մաթեմատիկական ֆակուլտետի «Ֆինանսական և ակտուար մաթեմատիկա» բաժինը:

Ունի ավելի քան 19 տարվա միջազգային աշխատանքային փորձ ֆինանսական և ներդրումային ոլորտներում:

2016 թվականին միացել է IDBank-ի թիմին: Ներկայումս հանդիսանում է IDBank-ի Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ:

Կարեն Նալբանդյան
Բիզնեսի զարգացման տնօրեն

Մեր հիմնական նպատակն է հաճախորդներին տրամադրել արագ, հարմարավետ և ապահով ծառայություններ ցանկացած վայրում և ցանկացած ժամի:

Այդ նպատակով մենք կառուցում ենք հաճախորդակենտրոն էկոհամակարգ հաճախորդների կարիքների շուրջ բաց թվային հարթակի հիման վրա, ինչպես նաև մասնաճյուղերի միջոցով:

Էկոհամակարգի հիմքում ընկած է թվային հարթակը: Դա տեխնոլոգիական հարթակ է, որը մենք զարգացնում ենք Idram-ի հետ համատեղ, որը թույլ է տալիս օնլայն ռեժիմում հաճախորդներին առաջարկել ինչպես բանկի սեփական պրոդուկտները և վճարային ծառայությունները, այնպես էլ գործընկերների պրոդուկտները և ծառայությունները: Հարթակը, միևնույն ժամանակ, ունի բոլոր անհրաժեշտ անվտանգության մակարդակները:

Բանկի մասնաճյուղերը լրացնում են էկոհամակարգը՝ ապահովելով Բանկի հետ առկա փոխգործակցության հնարավորություն ընթացիկ և պոտենցիալ հաճախորդների համար: Միևնույն ժամանակ, մեր ռազմավարական խնդիրն է հանդիսանում մասնաճյուղերի վերածումը այնպիսի պրոդուկտների մասով խորհրդատվական և վաճառքի կենտրոնների, որոնք հնարավոր չէ ամբողջովին տեղափոխել թվային հարթակ (հիփոթեք, ակտիվների գրավով վարկեր և այլն): Ընթացիկ գործարքները հնարավորինս դուրս են բերվում դեպի ինքնասպասարկման և հեռահար ուղիներ:

Մենք հավատում ենք, որ սահմանված նպատակների իրականացումը մեզ հնարավորություն կտա ապահովել լավագույն փորձառություն մեր հաճախորդների համար և նրանց հետ ստեղծել երկարաժամկետ վստահելի հարաբերություններ:

IDBank-ը մի հայացքով

Ֆինանսական ցուցանիշներ

Մանրածախ վարկային պորտֆել
ՀՀ դրամ

42,6 մլրդ

+43.5% տարեկան

Կորպորատիվ վարկային պորտֆել
ՀՀ դրամ

45,7 մլրդ

+9.9% տարեկան

Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ
ՀՀ դրամ

58,8 մլրդ

+4.4% տարեկան

Ընդհանուր կապիտալ
ՀՀ դրամ

43,6 մլրդ

+8.2% տարեկան

Զուտ շահույթ
ՀՀ դրամ

2,6 մլրդ

+17.1% տարեկան

Զուտ տոկոսային եկամուտ
ՀՀ դրամ

7,6 մլրդ

+7.2% տարեկան

ROA
%

1.9 %

+11.8% տարեկան

ROE
%

6.1 %

+17.3% տարեկան

Գործառնական ցուցանիշներ

Մասնաճյուղերի քանակ

12

Մանրածախ հաճախորդներ

~ 203.5 հազ

+34% տարեկան

Կորպորատիվ հաճախորդներ

~ 6.1 հազ

+17% տարեկան

Թողարկված քարտերի քանակ

142,4 հազ

+175,8% տարեկան

ATM-ների քանակ

52

-3,7% տարեկան

Վճարային տերմինալների քանակ

22

+15,8% տարեկան

Pos տերմինալների քանակ

274

+54,8% տարեկան

Մեր հաճախորդները

Բանկի կողմից մատուցվող ծառայություններից հնարավորինս հարմարավետ օգտվելու նպատակով Բանկն այժմ առաջարկում է հետևյալ հիմնական ուղիները.

Բազմաֆունկցիոնալ ինտերնետ և մոբայլ բանկինգ

Նորարարական և հարմարավետ մասնաճյուղեր

24/7 ինքնասպասարկման գոտիներ



24/7 հեռախոսազանգերի կենտրոն

Կորպորատիվ հաճախորդներ

~ 6,1 հազ հաճախորդ

+17% տարեկան

2019 թվականի վերջի դրությամբ Բանկի կորպորատիվ հաճախորդների թիվը շուրջ 6,100 է: Բանկը շարունակաբար զարգացնում է գործընկերային հարաբերությունները տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ՝ առաջարկելով հարմարավետ պայմաններ ֆինանսական խնդիրների լուծման համար:

- Ներդրվել և զարգացվում են ՓՄԶ համար նախատեսված փաթեթային ծառայություններ:
- Վարկային պորտֆոլիոների մասով ներդրվել են ֆինանսական սահմանաչափեր ինչպես խոշոր, այնպես էլ փոքր և միջին ձեռնակությունների համար: Ֆինանսական սահմանաչափերի առաջարկն օգնում է բարձրացնել հաճախորդների հավատարմությունը և ավելի ճկուն կերպով արձագանքել վերջիններիս վարկային պահանջներին:

Մանրածախ հաճախորդներ

~ 203.5 հազ հաճախորդ

+34% տարեկան

2019 թվականի վերջի դրությամբ Բանկի մանրածախ հաճախորդների թիվը շուրջ 203,500 է: Բանկը առավելագույն ջանքեր է գործադրում նրանց ֆինանսական կարիքների բավարարման և գոհունակության ապահովման համար: 2019 թվականի ընթացքում Բանկը ներկայացրել է և՛ ակտիվային, և՛ պասիվային բազմաթիվ պրոդուկտներ, որոնք շահավետ են, հարմարավետ և ուղղված են մեր հաճախորդների բարեկեցության բարձրացմանը:

- Քարտային և խնայողական հաշիվների պայմանները լավագույններից են բանկային համակարգում, ինչի շնորհիվ 2019 թվականի ընթացքում աճել են քարտային և խնայողական հաշիվների մնացորդները:
- 2019 թվականին զգալիորեն աճել են նաև Բանկի քարտերով իրականացված գործարքների ծավալները: Բանկը զարգացնում է իր քարտային պրոդուկտները՝ հաճախորդների կողմից իրականացվող գնումները և վճարումները ավելի հարմարավետ դարձնելու համար: Հաճախորդները հնարավորություն ունեն իրականացնել անհպում վճարումներ վճարային քարտերի միջոցով և Idram wallet and banking հավելվածով՝ QR և NFC տարբերակներով:
- Բանկը գիտակցում է հաճախորդների բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտությունը, ուստի 2019 թվականի ընթացքում հիփոթեքային վարկավորման ծավալները աճել են 86 %-ով նախորդ տարվա համեմատ:
- Բանկի սպառողական վարկերի պորտֆելը աճել է շուրջ 43 %-ով նախորդ տարվա համեմատ, ինչը վկայում է այն մասին, որ Բանկը կարևորում է նաև հաճախորդների ամենօրյա կարիքների ֆինանսավորումը արագ և շահավետ վարկերի և վարկային գծերի միջոցով:

Թվային հարթակ

IDBank-ը և Idram-ը, հանդես գալով Wallet and Banking կարգախոսով, առաջարկում են անձնական ֆինանսների կառավարման ոլորտում նմանը չունեցող ամբողջական գործիքակազմ:



Այն մեկ միասնական գործիք է բոլոր տեսակի վճարային, փոխանցումների և այլ ֆինանսական ծառայություններից օգտվելու համար, որն ամբողջովին բացառում է բանկեր հաճախելու, կանխիկի հետ շփվելու և անձնական ֆինանսների կառավարման գործընթացում ֆիզիկապես ներգրավված լինելու անհրաժեշտությունը:

Ընկերությունների համագործակցության ձևաչափը Հայաստանյան շուկայում առաջին բաց բանկինգի (open banking) օրինակն է:

Եվ՛ Բանկը, և՛ Idram-ը շարունակում են համաշխարհային ինովացիոն միտումների մշտադիտարկումը, զարգացնում գործող ծառայությունները, ինչպես նաև մշակում նորերը՝ հայաստանյան հաճախորդներին ապահովելով միջազգային չափանիշներին համապատասխան ծառայություններով:

Idram հավելվածով և idbanking.am հարթակով հնարավոր է՝

- Դառնալ հարթակի հաճախորդ՝ անցնելով հեռահար նույնականացում հաշված վայրկյանների ընթացքում
- QR և NFC տեխնոլոգիաներով վճարումներ 2,000-ից ավելի գործընկերների մոտ
- Կատարել գնումներ ավելի քան 200 առցանց խանութներից
- Կատարել ակնթարթային վճարումներ ավելի քան 250 ծառայությունների դիմաց՝ կոմունալ, հեռահաղորդակցություն, հարկեր, վարկեր, հաշիվների համալրում և մի շարք այլ ծառայություններ
- Պատվիրել IDBank-ի բանկային քարտ անմիջապես հավելվածից, ինչպես նաև կցել այլ բանկերի կողմից թողարկված քարտեր
- Բացել խնայողական, ընթացիկ հաշիվներ, նաև արտարժույթով
- Իրականացնել փոխանցումներ հաշվից, քարտից և դրամապանակից

Ոչ ֆինանսական արդյունքներ

Նոր քարտ՝ բազմաթիվ առավելություններով

Բանկը Idram-ի հետ համագործակցության շրջանակում թողարկել է Idram Rocket Visa քարտը: Idram Rocket Visa քարտը բոլորովին անվճար հնարավոր է պատվիրել առցանց IDBank-ի նոր Online Banking համակարգից (IDBanking.am), Idram-ի վեբկայքից, Idram բջջային հավելվածից, ինչպես նաեւ IDBank-ի մասնաճյուղերից:

Քարտը, ցանկության դեպքում, կառաքվի հաճախորդի նախընտրած հասցեով: Idram Rocket Visa քարտի դրական մնացորդի վրա հաճախորդը ստանում է տարեկան 4,5% տոկոսագումար, իսկ քարտով կատարած ցանկացած անկանխիկ գնման դեպքում՝ cashback:

Հեռախոսազանգերի կենտրոնը կաշխատի 24/7 ռեժիմով

DBank-ի Հեռախոսազանգերի Կենտրոնը այսուհետ արդեն շուրջօրյա հնարավորություն է տալիս աշխարհի ցանկացած կետից կապվել Բանկի հետ և ստանալ կոմպետենտ խորհրդատվություն բանկային ամենատարբեր գործառնությունների մասին:

«Բանկային գործառնությունների վերաբերյալ ժամանակին ստացված տեղեկատվությունը կարող է զերծ պահել մեր հաճախորդներին տարբեր իրավիճակներում ի հայտ եկող խնդիրներից: Հաշվի առնելով այն, որ հաճախորդների թիվը գնալով աճում է, իսկ Բանկը 24/7 ռեժիմով առաջարկում է մի շարք ծառայություններ, որոնց հետ կապված հարցերին անհրաժեշտ է արագ արձագանքել՝ Բանկը որոշել է Հեռախոսազանգերի կենտրոնի աշխատանքը դարձնել շուրջօրյա:

Բանկը Առևտրի միջազգային պալատի անդամ

IDBank-ը՝ ՀՀ բանկային համակարգում առաջինը պաշտոնապես անդամակցեց Առևտրի միջազգային պալատին (ԱՄՊ) / International Chamber of Commerce (ICC)՝ դառնալով ICC Հայաստանի ազգային կոմիտեի (ICC National Committee Armenia – ICC NCA) անդամ:

Առևտրի միջազգային պալատին անդամակցությունը հնարավորություն է տալիս IDBank-ի փորձագետներին ներգրավվել ICC Բանկային հանձնաժողովի (ICC Banking Commission) կազմում, մասնակցել ICC միջազգային աշխատանքային խմբերի գործունեությանը, որոնք ձևավորում են բանկային նորարարական լավագույն գործիքների և լուծումների վերաբերյալ առաջարկներ և խորհրդատվություն:

Բանկի Աբովյանի մասնաճյուղը տեղափոխվել է նոր հասցե

Ինչպես նորաբաց մյուս մասնաճյուղերում, Աբովյանի մասնաճյուղում ևս թե դիզայնը, թե տեխնիկական ու տեխնոլոգիական լուծումները հնարավորություն են տալիս վայելել լիարժեք, բարձրորակ սպասարկման առավելությունները:

Բանկը շարունակում է մասնաճյուղերի արդիականացման ծրագիրը՝ հաճախորդներին մատուցելով ժամանակակից, հարմարավետ լուծումներ:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, հասարակայնության հետ կապեր

Ինչպես նախկինում, 2019 թվականին նույնպես, Բանկը, հավատարիմ մնալով իր՝ Հայաստանի լավագույն թվային բանկ դառնալու տեսլականին, շարունակել է իրագործել ռազմավարությամբ սահմանված նպատակները և ծրագրերը:

Տարվա ընթացքում իրականացվել են նաև բազմաթիվ նախագծեր սոցիալական պատասխանատվության շրջանակներում:

«Կառուցի՛ր կարիերադ IDBank-ի հետ» ուսումնական ծրագիր

Բանկը, կարևորելով երիտասարդ սերնդի համար նոր հնարավորությունների ստեղծումը, որոշել է լուծել այս խնդիրը գոնե մի խումբ ուսանողների համար և հնարավորություն տալ նրանց բանկի միջոցներով մասնակցել դասընթացների, իսկ այնուհետև՝ նաև աշխատել բանկում:

Քանի որ Բանկի ռազմավարական նպատակներից մեկը սպասարկման որակի բարելավումն է և հաճախորդներին անհատական մոտեցումների տրամադրումը, ընտրվել են այնպիսի ուսանողներ, ովքեր պատրաստ են կարիերան սկսել հենց այդ կարևորագույն օղակից:

IDBank-ի անվան՝ 1 մլն դրամի չափով կրթաթոշակ ուսանողներին

Կարևորելով կրթությունը և երիտասարդ սերնդի շարունակական զարգացումը՝ Բանկը հնարավորություն է ընձեռում ՀՀ պետական բուհերում գերազանցությամբ սովորող ուսանողներին շարունակել կրթությունը մագիստրատուրայում IDBank-ի անվան կրթաթոշակով:

Բազմաթիվ դիմորդներից ընտրվել է 5 ուսանող. նրանք ստացել են 1-ական մլն. ՀՀ դրամ կրթաթոշակ ուսումը մագիստրատուրայում շարունակելու համար: Հայտարարվել է նաև «Կառուցիր կարիերադ IDBank-ի հետ» ծրագրի երկրորդ փուլի մասին:

IDBank-ը՝ Rock Aid Armenia ծրագրի 30-ամյակի եւ ռոք աստղերի այցի գլխավոր հովանավոր

Հայաստան են ժամանել աշխարհահռչակ ռոք երաժիշտներ Իէն Գիլանը և Թոնի Այոմին: «Rock Aid Armenia նախագիծը IDBank-ի համար առանձնահատուկ կարևորություն ունի, քանի որ խոսքը 3 տասնամյակ ապրող բարեգործության մասին է:

Որակյալ կրթությունը մեր երկրի զարգացման գրավականն է, իսկ շնորհակալ լինելու ունակությունը ամեն ինչի շարժիչ ուժն է: IDBank-ն առաջնորդվում է հենց այս արժեքներով:

IDBank-ի հովանավորությամբ Հայաստանը մասնակցեց ITF Taekwon-Do-ի Եվրոպայի Գավաթի առաջնությանը

Հունիս ամսին Սոչի քաղաքում տեղի ունեցավ ITF Taekwon-Do-ի Եվրոպայի Գավաթի առաջնությունը: IDBank-ի հովանավորությամբ՝ Հայաստանը նույնպես մասնակցեց այս առաջնությանը:

IDBank-ը կարևորում է առողջ ապրելակերպը, շարունակում է աջակցել տարբեր մարզաձևերի մասսայականացմանը Հայաստանում:

Հայաստանում առաջին անգամ անցկացվեց Քունգ ֆուի աշխարհի գավաթը

Աշխարհի գավաթի մրցաշարի գլխավոր հովանավորը IDBank-ն էր: Բանկը կարևորում է առողջ ապրելակերպն ու շարունակում աջակցել տարբեր մարզաձևերի ներկայացուցիչներին:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, հասարակայնության հետ կապեր

IDBank-ը միացել է Վորլդ Վիժն Հայաստանի նոր «Դպրոցի ճամփան» նվիրատվական արշավին

IDBank-ը միացել է Վորլդ Վիժն Հայաստանի նոր «Դպրոցի ճամփան» նվիրատվական արշավին, որի նպատակն է հնարավորինս շատ երեխաների ապահովել դպրոց գնալու առաջին անհրաժեշտության պարագաներով:

Արդեն երկրորդ տարին անընդմեջ IDBank-ն աջակցում է Վորլդ Վիժն Հայաստանի նվիրատվական նախաձեռնություններին, որոնց նպատակն է բարելավել կարիքավոր ընտանիքներում ապրող երեխաների կյանքը

Բանկը իրականացրեց տեղեկատվական անվտանգության արշավ

Կարևորելով Տեղեկատվական անվտանգության նշանակությունը հաճախորդների միջոցների ապահովվածության, անվտանգության կանոնների պահպանության տեսանկյունից՝ IDBank-ն իրականացրեց տեղեկատվական անվտանգության՝ հաճախորդների իրազեկման արշավ:

Բանկը, հաջողությամբ անցնելով աշխարհում ընդունված և լավագույն ՏԱ ստանդարտի ISO 27001:2013 սերտիֆիկացումը, ապահովում է ՏԱ լավագույն ստանդարտները

Նվիրի՛ր երազանք

IDBank-ն ավանդույթի համաձայն իր «Նվիրի՛ր երազանք» նախաձեռնության շրջանակում այս տարի էլ իրականացրել է Տավուշի մարզի սահմանամերձ Չինարի գյուղի երեխաների ամանորյա ցանկությունները:

Նախաձեռնության նպատակը հեռավոր մարզերի երեխաներին ուրախություն պարգևելն է: Համայնքային խնդիրներն IDBank-ի ուշադրության կենտրոնում են, և Բանկն ամեն տարի ընտրելով հեռավոր մարզերի որևէ գյուղ՝ առաջնորդվում է որոշակի չափանիշներով՝ հաշվի առնելով տվյալ համայնքի ընդհանուր սոցիալական խնդիրներն ու մարտահրավերները:

Ֆինանսական արդյունքներ

Արման Ասատրյան

Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ

Ծնվել է 1977թ. հունվարի 16-ին:
Ավարտել է Երևանի Պետական Տնտեսագիտական Ինստիտուտի «Ընդանուր տնտեսագիտություն» ֆակուլտետը «Համաշխարհային էկոնոմիկա» մասնագիտությամբ: :

2017 թվականին նշանակվել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Գործառնական տնօրեն, Վարչության անդամ:

Ներկայումս հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ:

Ունի 22 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական համակարգում:

2017 թվականից լինելով Բանկի Գործառնական տնօրեն՝ ներդրել եմ իմ մասնագիտական հմտությունները Բանկի ընթացիկ գործունեության բարձր որակի ապահովման և գործընթացների արդյունավետության բարձրացման գործում:

Այժմ, միանալով Ֆինանսական թիմին, ցանկանում եմ ամփոփել Բանկի ֆինանսական արդյունքները 2019 թվականի ընթացքում:

IDBank-ի համար 2019 թվականը առաջընթացի տարի էր: 2019-ի թվականի արդյունքներով գրանցվել է շուրջ 2,6 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթ: Ունենք ակտիվների աճ 23%, իսկ վարկային պորտֆելն աճել է 26%-ով:

Վերլուծելով ֆինանսական ցուցանիշները՝ կարող ենք արձանագրել, որ Բանկը աճ է գրանցել բոլոր թիրախային ուղղություններով, որոնք սահմանված են Բանկի զարգացման ծրագրով: Սա, իհարկե, վկայում է նպատակային և արդյունավետ աշխատանքի մասին:

Ֆինանսական արդյունավետության ցուցանիշները ևս աճել են նախորդ ժամանակահատվածի համեմատ: Այդ դրական դինամիկան ևս մեկ անգամ փաստում է Բանկի կայուն և առաջանցիկ տեմպերով զարգացման մեր տեսլականի իրատեսական լինելը:

Վստահ եմ, որ առաջիկայում իրականացվելիք մեր ծրագրերը նույնպես կունենան հաջողություններ՝ ոչ միայն ամրապնդելով Բանկի ֆինանսական կայունությունը, այլև գրանցելով աննախադեպ արդյունքներ:

Ֆինանսական արդյունքներ

Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)



Շահույթ տարվա համար (մլրդ ՀՀ դրամ)



Զուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Վարկային պորտֆել

Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (ամորտիզացված արժեքով հաշվառվող) , մլն ՀՀ դրամ



Վարկային պորտֆելի կառուցվածք

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ (մլրդ դրամ)



Արդյունավետության ցուցանիշներ

ROE %



ROA %



Մեր անձնակազմը

Ծնվել է 1983 թ. հուլիսի 27-ին

Ավարտել է Երևանի լեզվաբանական համալսարանը՝ ստանալով լեզվաբանության և մանկավարժության գծով երկակի մասնագիտացման դիպլոմ:

Մարդկային ռեսուրսների և վերապատրաստման ոլորտում ունի ավելի քան 10 տարվա միջազգային փորձ: 2018-ին նշանակվել է IDBank-ի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության ղեկավար:

Սոնա Մանուչարյան
Մարդկային ռեսուրսների կառավարման վարչության ղեկավար

Ցանկացած կայացած կազմակերպության համար թիմն է ամենակարևոր արժեքը: Բանկի ռազմավարության կատարման գործում մեր ամուր և նպատակասլաց թիմի շնորհիվ ենք յուրաքանչյուր օր ավելի կայուն և հաջողակ դառնում:

Որպես գործատու Բանկը չի խնայում որևէ միջոց աշխատանքային միջավայրը գրավիչ և հետաքրքիր դարձնելու համար և քայլեր է ձեռնարկում, որ յուրաքանչյուրն իրեն գնահատված և մոտիվացված զգա և ոչ միայն ցուցաբերի հիանալի արդյունքներ, այլ նաև մշտապես զարգացնի իր մասնագիտական որակներն ու հմտությունները:

Բանկը կարևորում է կայուն թիմային աշխատանքը, որտեղ ստեղծված են լավագույն միջոցները աշխատանքի համար և էլ ավելի միավորվելու աշխատանքային ժամերից դուրս: Թիմի համար կազմակերպվող եռամսյակային թիմային միջոցառումների լայն շրջանակը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր անդամի գտնել իրեն հետաքրքրող միջոցառումներ, ավելի լավ ճանաչել իր գործընկերների նախասիրությունները և ավելի ամրանալ որպես թիմ աշխատանքային հաջողությունների հասնելու համար:

Աշխատանքի առաջին իսկ օրվանից, մենք բացում ենք մեր յուրաքանչյուր աշխատակցի համար հնարավորությունների լայն դարպասների դռները՝ տալով հնարավորություն աճի, մասնագիտական որակների բարձրացման, դասընթացային և հեռավար վերապատրաստման և փորձի փոխանակման:

Ինչպես միշտ ամենակարևոր դերն ունեն մեր ղեկավարներն ընկերության մշակույթի տարածման, մեր աշխատակիցներին մոտիվացված պահելու և կարիերայի զարգացման ընթացքում աջակցելու հարցում: Կառավարման բոլոր մակարդակներում բաց դռների քաղաքականությունն ու հասանելիությունը հնարավորություն են տալիս աշխատակիցներին մշտապես հանդես գալ նորարարական գաղափարներով, կաղապարներից դուրս մտածելակերպով՝ կատարելագործվելով իրենց կողմից իրականացվող աշխատանքում:

Անձնակազմի կառուցվածքը

481 Բանկի աշխատակիցների փաստացի թվաքանակը 2019-ի վերջի դրությամբ

Աշխատակիցների կազմն ըստ տարիքի, %



Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ տարիքի, %



Աշխատակիցների կազմն ըստ սեռի, %



Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ սեռի, %



Թիմային և կորպորատիվ մշակույթ

Մենք Թիմային ենք – սա Բանկի հիմնական արժեքներից մեկն է և իր ազդեցությունն ունի Բանկի գործունեության բոլոր ոլորտների վրա:

Կորպորատիվ մշակույթի դերը Բանկում յուրաքանչյուր աշխատակցին մոտիվացնելու, գնահատելու և ինքնազարգանալու հնարավորություն տալն է: Թիմում կարևոր է միասնական նպատակն ու թիմային և անհատական հաղթանակն ու հաջողությունը:

Ողջ տարվա ընթացքում Բանկը կազմակերպել է տարբեր միջոցառումներ՝ թիմային ոգին բարձրացնելու և ամբողջ թիմին առավել դրական էներգիա փոխանցելու համար: Դրանց թվում էին՝ տոնական անակնկալները, թիմի մեծ ու փոքր հաղթանակների նշումը, սպորտային միջոցառումները, ինչպես նաև կազմակերպված կորպորատիվ երեկույթները և եռամսյակային թիմային միջոցառումները :

Ամբողջ տարվա ընթացքում Թիմը միավորվել է նաև խոշոր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու գործում:

Յուրաքանչյուր աշխատակից գիտակցում է, որ նա է Բանկի դեսպանը և նա է լավագույնս ներկայացնում Բանկը որպես գործատու և որպես ամուր ֆինանսական կառույց:

Վարձատրություն և մոտիվացիա

Մեր աշխատակիցները մեր ամենամեծ ակտիվն են, և նրանց ջանքերի և ներդրման շնորհիվ մենք ավելի ուժեղ և դինամիկ ենք դառնում մեր նպատակներին հասնելու ճանապարհին:

Բանկը աշխատակիցներին խրախուսում է ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական եղանակներով: Բանկի արտոնությունների փաթեթը մշտապես վերանայվում և թարմացվում է:

Բոնուսային և KPI համակարգերը գործում են ինչպես հաճախորդների սպասարկում իրականացնող, այնպես էլ աջակցող ստորաբաժանումների աշխատակիցների համար, ինչը նպաստում է արդյունավետության բարձրացմանը և բոլոր ոլորտներում ավելի լավ արդյունքների ձեռքբերմանը:

Աշխատակիցների ներգրավման քաղաքականություն

Բանկի ներգրավման քաղաքականությունը սահմանում է հնարավորություններ հանդես գալ երիտասարդների համար որպես առաջին գործատու, ինչպես նաև թիրախավորում ոլորտի առաջատար մասնագետներին մի շարք հաստիքները համալրելու գործընթացում:

Մենք առաջնահերթություն ենք տալիս ներքին առաջխաղացումներին՝ առավել քան 30%-ը թափուր հաստիքների համալրելով մեր ներքին ռեսուրսի առաջխաղացման շնորհիվ:

Բանկը թափանցիկ է աշխատակիցների ներգրավման իր քաղաքականության մեջ, հավասար և արդար հնարավորություն է տրվում յուրաքանչյուր դիմորդի: Բանկը 2019թ. երկու անգամ իրականացրել է «Կառուցիր կարիերադ ԱյԴի Բանկի հետ» ծրագրիը, հնարավորություններ տալով 26 նորավարտ ուսանողի սկսել իրենց կարիերան Բանկի հետ:

Կարիերայի աճ

Մենք ուժեղ ենք մեր բազմազան և աճող թիմի շնորհիվ: 2019թ. թիմն ավելացել է շուրջ 100 նոր աշխատակցով: Բանկի աշխատակիցների շուրջ կեսը ներկայացնում են երիտասարդ սերունդը և ժամանակակից մտածելակերպի և դրական ամբիցիաների շնորհիվ պատրաստ են փոփոխությունների և աճի:

Բանկը կարևորում է մշտական մասնագիտական աճ ապահովող դասընթացների կազմակերպումը՝ օգտագործելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ռեսուրսները, գիտակցելով, որ դրանք նպաստում են թիմի մասնագիտական հմտությունների զարգացմանը՝ ֆինանսական ոլորտում հիմնական առաջընթացին և նորարարություններին համընթաց:

Հատուկ կարևորություն է տրվում մեր մասնաճյուղերի աշխատակիցներին մասնագիտական որակների մշտապես բարձրացման, որի արդյունքում էլ ավելի բարձր մակարդակի է հասնում սպասարկման որակն ու հնարավորություն տալիս արագ բարձրանալ կարիերայի աստիճաններով:

Մենք գնահատում ենք մեր ղեկավար կազմի մշտական զարգացումը՝ դրանով խթանելով մեր մշտական աշխատողների հետագա զարգացումը, ինչպես նաև խրախուսում ենք մեր ղեկավար կազմին՝ մասնակցելու ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս անցկացվող միջազգային դասընթացներին:

Տարվա ընթացքում ավելի քան 100 դասընթացներ են անցկացվել Բանկում, մասնագիտական ուսումնական կենտրոններում և Հայաստանից դուրս:

Համագործակցություն համալսարանների հետ

Կրթության կարևորումը Բանկի կարևորագույն առաջնահերթություններից է: Բանկն ակտիվորեն համագործակցում է մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և ակտիվ մասնակցություն է ցուցաբերում համալսարաններում «Կարիերայի օր» կոչվող միջոցառումներին՝ ուսանողներին ներկայացնելով Բանկի հետ կարիերա ստեղծելու հնարավորությունները:

2019 թ-ին շուրջ 50 ուսանող ներգրավվել է Բանկի աշխատանքային գործընթացում, հաճախել պրակտիկ դասընթացների, և նրանցից լավագույնները ընդունվել են աշխատանքի:

Կարևորելով կրթությունը Բանկը 2019թ. սկսած նաև իրականացնում է ԱյԴի Բանկի անվան կրթաթոշակը՝ հնարավորություն տալով լավագույն ուսանողներին շարունակել ուսումը մագիստրատուրայում՝ ստանալով 1 միլիոն դրամի կրթաթոշակ Բանկից:

2

Կորպորատիվ կառավարում

Մեր բաժնետերերը և խորհուրդը 21

Ռիսկերի կառավարում 22

Բանկի բաժնետերերը



Բանկի խորհուրդը

Բանկի խորհուրդը իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը `Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում՝ համաձայն օրենքի և Բանկի կանոնադրության:

Խորհրդի լիազորություններից են՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ ռազմավարական զարգացման ծրագրի հաստատումը,
2. Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը,
3. Բանկում ներքին հսկողության ստանդարտների հաստատումը,
4. շահաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր Ժողովին առաջարկությունների ներկայացումը,
5. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր Ժողովին ներկայացումը,
6. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացումը,
7. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,
8. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը,
9. Օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ հարցերի վերաբերյալ որոշումների կայացումը:

Վարդան Դիլանյան
Խորհրդի նախագահ
2011-ին միացել է Accenture- ին `որպես Ռուսաստանի Դաշնության Ֆինանսական ծառայություններ խմբի գործադիր տնօրեն: Ներկայումս հանդիսանում է «Accenture»-ի ներկայացուցչության ղեկավարը Ռուսաստանում և Ղազախստանում:

Կարեն Մարգարյան
2003-ին միացել է Համաշխարհային էկոնոմիկայի R&D ինստիտուտին (Մոսկվա): Ներկայումս Համաշխարհային Էկոնոմիկայի R&D ինստիտուտի տնօրենն է և աշխատում է Մոսկվայի ֆինանսահիրավական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնում `որպես պրոֆեսոր:

Մաքսիմ Մորոզով
2018 թ.-ին միացել է բելոռուսական «Պարիտետբանկ»-ին: Ներկայումս հանդիսանում է «Պարիտետբանկ»-ի Վարչության նախագահի խորհրդական:



Ալեքսանդր Խաչատուրյան
2018 թվականից աշխատում է Թի Քեյ ընդ Փարթներս/ TK and Partners/ ՓԲԸ-ում `որպես գործընկեր: Ներկայումս հանդիսանում է «Հայաստանի տնօրենների ինստիտուտի» հիմնադիր անդամ, «Հայաստանի էներգետիկ գործակալության» խորհրդի անդամ:

Մազեն Ա. Շեհայեբ
2010 թ.-ին միացել է լիբանանյան «Կրեդիտ բանկ» Ս.Ա.Լ-ին: Ներկայումս հանդիսանում է Լիբանանի «Կրեդիտ բանկ» Ս.Ա.Լ-ի արտաքին դուստր ձեռնարկությունների համակարգման ղեկավարը:

Ռիսկերի կառավարում

Հիմնական տնտեսական նորմատիվներ

Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները՝ կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից և բանկային համակարգի համապատասխան ցուցանիշներից բարձր մակարդակում: 2019-ի տարեվերջին կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 28,6%[1], իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները՝ համապատասխանաբար 26,9% և 164,5%[2]:

Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1(2)



Ընդհանուր իրացվելիության նորմատիվ Ն2(1)



Ընթացիկ իրացվելիության նորմատիվ Ն2(2)



Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ

Վարկային ռիսկի կառավարում

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները՝

- ✓ վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը
- ✓ գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցակցության աստիճանը և մրցակցությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի, զուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է նաև վարկային ռիսկի ախորժակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ:

Բանկը գտնվում է վարկային ռիսկերի կառավարման շարունակական զարգացման և արդիական մեթոդների ներդրման գործընթացում, մասնավորապես՝ Բանկում ներդրվում են վարկային ռիսկի կառավարման նոր արդիական մոտեցումներ և հաշվողական մոդելներ, մանրածախ վարկավորման գործընթացի սքորինգային համակարգեր, հաճախորդների ռիսկայնության մակարդակների վրա հիմնված վարկերի գնագոյացման համակարգ (Advanced Risk-Based Pricing (RBP) model):

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հաշվարկվում է իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվները, որոնց հիման վրա կայացվում են համապատասխան որոշումներ: Բանկը իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է հետևյալ հիմնական մոդելների միջոցով՝

- ✓ Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդել,
- ✓ Իրացվելիության նորմատիվների վերլուծություն,
- ✓ Սթրես թեստավորում:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցում շուկայում գործող ցուցանիշներին, մշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ժեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով, նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը:

Արտարժութային ռիսկի կառավարում

Արտարժութային ռիսկի կառավարման հիմնական սկզբունքն է նպաստել Բանկի արտարժութային բաց դիրքերի արդյունավետ կառավարման գործընթացին՝ միաժամանակ հետևելով սահմանված արտարժութային ռիսկի կառավարման նորմատիվային և ուղեկիշային ցուցանիշների սահմանաչափերի պահպանմանը:

Գործառնական ռիսկի կառավարում

Գործառնական ռիսկերի հայտնաբերման և դասակարգման համար Բանկն իրականացնում է ռիսկերի ինքնագնահատում, տեղի ունեցած գործառնական պատահարների վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրում և խաբեության ռիսկի հայտնաբերում («Կատարված, փոփոխված և հեռացված գործարքների», FPD/SPD/TPD տվյալների մասին հաշվետվությունների և Բանկում իրականացված գործարքների մշտադիտարկման միջոցով):

Մինչ նոր պրոդուկտների, նոր և վերանայվող ներքին իրավական ակտերի, բանկային գործառնությունների, գործողությունների և համակարգերի ներդրումը, Բանկը ԳՌ տեսանկյունից պոտենցիալ ռիսկերի բացահայտման նպատակով, ապահովում է վերջիններիս ուսումնասիրությունը և սահմանում է գործընթացների քայլային հաջորդականությունների ռիսկի հակվածության աստիճանները:

Երկրի ռիսկի կառավարում

Այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը՝ հիմք ընդունելով միջազգային ռեյտինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը և ներքին ընթացակարգով սահմանված սահմանաչափերը:

Համբավի ռիսկի կառավարում

Կառավարման նպատակն է բացահայտել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ բնականոն գործունեության ընթացքում բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքի առաջացման ուղղությունները և սահմանել Բանկի կողմից համբավի ռիսկի կանխարգելմանը/նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

Ռազմավարական ռիսկի կառավարում

Ռազմավարական ռիսկի կառավարման հիմնական նպատակն է անհամապատասխան Բիզնես մոդելի որդեգրման արդյունքում առաջացող կամ հնարավոր կորուստները նվազագույնի հասցնելը: Ռազմավարական ռիսկի առաջացման հնարավորությունը բացահայտելու և գնահատելու նպատակով Բանկը ներդնում է չափանիշներ, որոնց կարգավիճակի և մեծության փոփոխությունը նշանակում է Բանկի գործունեության որոշակի ուղղության բնույթի փոփոխություն, և հետևաբար, որակապես այլ բնույթի ռազմավարական ռիսկ կրելու հնարավորություն:

Թվարկված ռիսկերի գծով Բանկում գործող նորմատիվային դաշտը կարգավորվում է IDBank-ի ներքին և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան իրավական ակտերով:

31/12/2019թ դրությամբ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն:

3

Ֆինանսական հաշվետվություններ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 26

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 26

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 27

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 27

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթգ.	2019թ. հազ. դրամ	2018թ.* հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	4	12,325,560	11,634,191
Տոկոսային ծախս	4	(4,691,954)	(4,510,499)
Զուտ տոկոսային եկամուտ		**7,633,606**	**7,123,692**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	5	891,540	738,970
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	5	(797,076)	(454,591)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		**94,464**	**284,379**
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	6	1,226,290	361,857
Զուտ (կորուստ)/օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ ֆինանսական գործիքների գծով		(550,515)	165,636
Զուտ իրացված օգուտ ներդրումային արժեթղթերի գծով		1,324	1,481,635
Զուտ այլ գործառնական եկամուտ	7	671,419	496,934
Գործառնական եկամուտ		**9,076,588**	**9,914,133**
Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով	8	(136,539)	(1,813,773)
Սեփականության գծով ծախսեր		(3,326,719)	(3,002,806)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	9	(2,469,057)	(2,204,748)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**3,144,273**	**2,892,806**
Շահութահարկի գծով ծախս	10	(588,765)	(709,836)
Շահույթ տարվա համար		**2,555,508**	**2,182,970**
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)՝ առանց շահութահարկի			
Հոդվածներ, որոնք վերդասակարգված են կամ կարող են հետագայում վերդասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.			
- իրական արժեքի զուտ փոփոխություն	10	737,063	(86,988)
- շահույթ կամ վնաս վերդասակարգված զուտ գումար	10	(1,059)	(1,185,308)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերդասակարգված են կամ կարող են հետագայում վերդասակարգվել որպես շահույթ կամ վնաս		*736,004*	*(1,272,296)*
Հոդվածներ, որոնք չեն վերդասակարգվի որպես շահույթ կամ վնաս			
Վերագնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	10	-	(45,691)
Ընդամենը հոդվածներ, որոնք չեն վերդասակարգվի որպես շահույթ կամ վնաս		-	*(45,691)*
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար՝ առանց շահութահարկի		**736,004**	**(1,317,987)**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**3,291,512**	**864,983**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2-ի կետ (ե)):

8-ից 111-ըդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. ապրիլի 27-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Տիեր Աբրահամյան
Վարչության նախագահ

Անուշիկ Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթգ.	2019թ. հազ. դրամ	2018թ.* հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	14,337,037	11,260,756
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	12		
- Բանկի կողմից պահվող		6,502,509	4,728,200
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		2,260,311	-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	12		
- Բանկի կողմից պահվող		11,270,882	15,136,723
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		11,829,493	5,587,003
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		4,312	-
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	13	10,305,167	13,068,992
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	14	4,767,263	3,429,813
Հաճախորդներին տրված վարկեր	15	77,379,245	61,470,502
Ընթացիկ հարկային ակտիվ		99,786	139,189
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	5,810,745	5,061,844
Օգտագործման իրավունքի ձևի ակտիվ	17	1,606,304	-
Առգրավված ակտիվներ	15	1,476,007	1,087,443
Այլ ակտիվներ	18	2,407,470	1,103,491
Ընդամենը ակտիվներ		**150,056,531**	**122,073,956**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		-	1,337
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	19	20,129,742	5,937,780
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	20	16,292,695	6,771,902
Թողարկված պարտքային արժեթղթեր	21	6,700,803	10,823,040
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	22	58,819,120	56,320,356
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	1,389,630	617,324
Վարձակալության գծով պարտավորություն	17	1,638,420	-
Այլ պարտավորություններ	23	1,530,487	1,338,095
Ընդամենը պարտավորություններ		**106,500,897**	**81,809,834**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	24	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Շենքերի վերագնահատումից աճ		110,808	110,808
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ		842,981	106,977
Չբաշխված շահույթ		3,615,896	1,060,388
Ընդամենը սեփական կապիտալ		**43,555,634**	**40,264,122**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**150,056,531**	**122,073,956**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2-ի կետ (ե)):

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթգ.	2019թ. հազ. դրամ	2018թ.* հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ստացված տոկոսներ		11,807,607	11,012,778
Վճարված տոկոսներ		(4,300,316)	(4,822,049)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ		891,540	738,970
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(797,076)	(454,591)
Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով		(556,359)	(52,828)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		848,241	638,962
Այլ ստացված եկամուտ		526,668	381,597
Աշխատակազմի գծով ծախսերի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(4,957,374)	(4,768,296)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Հակադարձ հետգնմամբ պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		(1,337,205)	3,075,123
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ		2,735,830	(1,877,157)
Հաճախորդների տրված վարկեր		(15,669,226)	(9,413,928)
Այլ ակտիվներ		(695,093)	(208,535)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)			
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ		13,645,608	(326,129)
Հետգնմամբ պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		9,545,547	6,757,099
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		2,913,084	(7,569,030)
Այլ պարտավորություններ		215,094	499,054
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը		**14,816,570**	**(6,388,960)**
Վճարված շահութահարկ		-	(33,000)
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր		**14,816,570**	**(6,421,960)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(8,368,271)	(5,194,557)
Մուտքեր ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից		2,737,112	6,457,542
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,980,597)	(593,278)
Ստացված շահաբաժիններ		144,751	-
Ներդրումային գործունեության համար (օգտագործված)/ներդրումային գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**(7,467,005)**	**669,707**
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	21	4,252,464	2,418,750
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	21	(8,207,150)	(2,422,500)
Վարձակալության գծով պարտավորության մարում	17	(282,238)	-
Ֆինանսավորում գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր		**(4,236,924)**	**(3,750)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**3,112,641**	**(5,756,003)**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(37,750)	(212,494)
Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		1,390	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները (համախառն) տարեսկզբի դրությամբ		11,260,756	17,229,253
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	11	**14,337,037**	**11,260,756**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մուտեցումը: Այս մուտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2-ի կետ (ե)):

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ	Թաքնված-ված կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Շենքերի վերագնա-հատումից աճ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	33,971,850	5,014,099	156,499	1,379,273	(1,122,582)	39,399,139
Ընդամենը համապարփակ եկամուտ						
Շահույթ տարվա համար	-	-	-	-	2,182,970	2,182,970
Այլ համապարփակ վնաս						
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս						
- Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետածգված հարկի	-	-	-	(86,988)	-	(86,988)
- Շահույթ կամ վնաս փոխանցված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետածգված հարկի	-	-	-	(1,185,308)	-	(1,185,308)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	*(1,272,296)*	-	*(1,272,296)*
Հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս						
Շենքերի վերագնահատման պահուստի փոփոխություն՝ առանց հետածգված հարկի	-	-	(45,691)	-	-	(45,691)
Ընդամենը հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս	-	-	*(45,691)*	-	-	*(45,691)*
Ընդամենը այլ համապարփակ վնաս	-	-	**(45,691)**	**(1,272,296)**	-	**(1,317,987)**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	**(45,691)**	**(1,272,296)**	**2,182,970**	**864,983**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	**33,971,850**	**5,014,099**	**110,808**	**106,977**	**1,060,388**	**40,264,122**
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.*	33,971,850	5,014,099	110,808	106,977	1,060,388	40,264,122
Ընդամենը համապարփակ եկամուտ						
Շահույթ տարվա համար	-	-	-	-	2,555,508	2,555,508
Այլ համապարփակ եկամուտ						-
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս						
- Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետածգված հարկի	-	-	-	737,063	-	737,063
- Շահույթ կամ վնաս փոխանցված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետածգված հարկի	-	-	-	(1,059)	-	(1,059)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	*736,004*	-	*736,004*
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	**736,004**	-	**736,004**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	-	**736,004**	**2,555,508**	**3,291,512**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**33,971,850**	**5,014,099**	**110,808**	**842,981**	**3,615,896**	**43,555,634**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մուտեցումը: Այս մուտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 2-ի կետ (ե)):

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. Ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են ԱյԴի Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

2. 2019 թվականի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Միեր Աբրահամյան	Վարչության նախագահ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Արման Ասատրյան	Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Կարեն Նալբանդյան	Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Ռաֆիկ Սուվարյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Անուշիկ Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Սերգեյ Առաքելյան	Թվային բանկինգի տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Տիգրան Մխիթարյան	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն Վարչության անդամի ժ/պ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)